

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

23.12. 2014 թ. ժամը 14.00

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 85-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլիլայանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի զինկոմները, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի փորձագետ Արմեն Մարտիրոսյանը և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2014 թվականի բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների 2014 թվականի վարչական հսկողության արդյունքների մասին:

/Զեկ. Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

- Արմեն Մարտիրոսյանը - ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի փորձագետ
- Ալիս Խեչոյանը - <<Հայկական ժամ>>-ի թղթակից

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. **Մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին և մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանին՝** ամենօրյա աշխատանքներ տանել մարզի զինկոմների և համայնքների ղեկավարների հետ՝ 2014 թվականի ձմեռային զորակոչի աշխատանքները ժամանակին և արդյունավետ կազմակերպելու ու անցկացնելու համար:

2. **Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանին և մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանին՝** 2015 թվականի հունվարի 15-ին հրավիրել ՀՀ Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստ:

3. **Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Յուրա Մուշեղյանին՝**

- 1) 2015 թվականի հունվարի 15-ին մարզի Կախակն և Կուտական համայնքների ղեկավարների մասնակցությամբ մարզպետի մոտ հրավիրել խորհրդակցություն՝ նշված համայնքների 2014 թվականի բյուջեների սեփական եկամուտների ցածր ցուցանիշներ ապահովելու պատճառները քննարկելու համար:
- 2) կազմել մարզի Կախակն համայնքի նախորդ տարիներին կուտակված աշխատավարձերի պարտքերի մարման գրաֆիկ:

4. **Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2014 թվականի բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և մինչև տարեվերջ ապահովել դրանց տարեկան ցուցանիշները:

2) մինչև տարեվերջ համայնքների 2015 թվականի բյուջեները ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ՖՄՏՂ վարչություն:

3) 2014 թվականի ձմեռային զորակոչի անցկացման ընթացքում զինվորական կոմիսարիատների հետ համատեղ կազմակերպել 18 տարին լրացած և մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրված ու տարկետման ժամկետը լրացած անձանց զորակոչը:

4) 2014 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականի ձմեռային զորակոչն անցկացնելու միջոցառումների մասին» N 180 - Ա որոշման հանձնարարականների կատարումը:

5) մարզի համայնքների բնակիչներին, գյուղացիական տնտեսություններին տեղեկացնել տրամադրվող պարարտանյութի, սերմացուի, դիզվառելիքի մասին և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել դրանց անհրաժեշտ քանակի մասին հայտերը:

6) միջոցներ ձեռնարկել մարզի համայնքներում 2014 թվականին վարչական հսկողության արդյունքում վեր հանված բոլոր թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏ

Ռ. Գրիգորյան

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ